ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1) Նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, նիստը սկսելու և ավարտելու ժամերը՝

ՀՀ կրթության և գիտության նախարարարություն /հասցե՝ Վ. Սարգսյան 3/, 2018 թ. մարտի 23, ժամը՝ 16^{00}-18^{00}

2) Նիստի օրակարգը՝

ՀՀ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող և նախատեսվելիք ծրագրեր՝ կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդման համատեքստում /զեկուցող՝ ՀՀ ԿԳՆ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության վարչության պետ՝ Արտակ Աղբալյան/

3) Նիստին մասնակցող խորհրդի անդամների, հրավիրված անձանց և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների տվյալները՝

Նախարարին կից հասարակական խորհրդի 24 անդամից նիստին մասնակցել է 13-ը՝

ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Լևոն Մկրտչյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Իռեն Սարգսյան	Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ
Թամարա Սաղաթելյան	«Լուսնյակ» հասարակական կազմակերպություն
Էմին Երիցյան	Հայաստանի համայնքների միություն
Արևիկ Սարգսյան	Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում

Սուսաննա Թադևոսյան	Հույսի կամուրջ
Դիանա Հովսեփյան	Հայ օգնության միություն
Կարինե Թումանյան	Հանրային խորհուրդ
Ժորա Ջհանգիրյան	Երևանի «Գլաձոր» համալսարանի ռեկտոր
Արամ Ծատուրյան	ԳԹԿ թեստաբանության բաժնի գլխավոր մասնագետ
Ազատ Հակոբյան	Արարատի պետական քոլեջի դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն
Յաշա Սահակյան	ՀՀ Կոտայքի մարզի Բջնիի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն
Հասան Թամոյան	Եզդիների ազգային միություն հ/կ
Բորիս Մակիչյան	Երևանի Հյուսիսային համալսարան
Արթուր Աղաբաբյան	Մ. Խորենացու անվան համալսարան
Խորեն Ոսկանյան	ՀՀ Արմավիրի թիվ 6 հիմնական դպրոցի ներառական կրթության համակարգող-սոցիալական մանկավարժ

Հրավիրված անձինք՝

Դավիթ Սահակյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Արտակ Աղբալյան	ԿԳՆ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության վարչության պետ
Արթուր Բաղդասարյան	ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ
Հեղինե Հովհաննիսյան	ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության գլխավոր մասնագետ
Լուսինե Մարգարյան	ԿԳ նախարարի մամուլի քարտուղար

4) Քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները՝

Նիստի սկզբում խորհուրդը հաստատել է օրակարգը, այն է՝ ՀՀ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության ոլորտում իրականացվող և նախատեսվելիք ծրագրեր՝ կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդման համատեքստում /զեկուցող՝ ՀՀ ԿԳՆ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության վարչության պետ՝ Արտակ Աղբալյան/:

Նիստը վարող ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյանը, ողջունելով խորհրդի անդամներին, նշել է, որ փորձ է արվում յուրաքանչյուր նիստի ընթացքում քննարկել կրթության համակարգի կոնկրետ ոլորտ: «Այսօր կանդրադառնանք ՄԿՈՒ ոլորտին, որտեղ բավականին լուրջ փոփոխություններ են իրականացվում: Եվրամիության հատուկ ծրագիրն այս տարի ևս ամբողջությամբ կենտրոնացած է ՄԿՈՒ ոլորտի վրա: Այս քննարկմամբ նպատակ ունենք ներկայացնել ոլորտում առկա բոլոր հիմնախնդիրները՝ հիմնականում կրթություն-աշխատաշուկա կապի համատեքստում, ինչպես նաև ակնկալել համապատասխան լուծումների առաջարկներ»,-նշել է Լևոն Մկրտչյանը՝ ընդգծելով, որ նախնական և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները՝ իրենց դերակատարությամբ և բաշխվածությամբ՝ ըստ մարզերի, կարիք ունեն լուրջ վերափոխումների: «Մի պահ ՄԿՈՒ ոլորտը բավականին մեծ անկում ապրեց, որը կարգավորելու համար մեծ ջանքեր են ներդրվել: Արդյունքում՝ այսօր մեծ հոսք ունենք դեպի նախնական և միջին մասնագիտական ոլորտ: Սակայն առկա է մեկ այլ խնդիր. երբ ուսումնասիրում ենք, թե ՄԿՈՒ շրջանավարտների քանի տոկոսն է գնում աշխատաշուկա և քանիսը՝ բուհ, ապա բավականին տխուր պատկեր է ստացվում: Այսինքն՝ ՄԿՈՒ մի զգալի հատված կրկին ծառառում է բուհի, այլ ոչ թե աշխատաշուկայի համար կադրեր պատրաստելուն: Դրա համար մենք վերջին տարիներին ակտիվ համագործակցում ենք մի շարք խոշոր կազմակերպությունների, օրինակ GIZ-ի, ԵՄ-ի, ինչպես նաև տեղական ընկերությունների հետ՝ իրականացնելու նոր բարեփոխումներ»,--նշել է նախարարը:

Հիմնական զեկուցող ՀՀ ԿԳՆ նախնական /արհեստագործական/ և միջին մասնագիտական կրթության վարչության պետ Արտակ Աղբալյանը ներկայացրել է օրակարգի հիմնական հարցը՝ մասնավորապես, անդրադառնալով «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2018-2022 թվականների բարեփոխումների ծրագրի», «Սոցիալական գործընկերության նոր հայեցակարգի» ընդունման և մասնավոր սեկտոր-ՆՄԿՈՒ հաստատություն նոր ձևաչափով համագործակցության անհրաժեշտությանը: Արտակ Աղբալյանը խոսել է նաև ՆՄՄԿ ուսհաստատություններում ուսուցանվող մասնագիտությունների՝ ՀՀ մարզերի զարգացման ուղղություններին և պահանջներին համապատասխանեցման և ձեռնարկատիրական գործունեության հնարավորությունների ստեղծման մասին: Անդրադառնալով կարիերայի կենտրոնների ներդրմանը՝ Ա. Աղբալյանը նշել է, որ այն ներդրվել է 75 ուսհաստատությունում, ինչպես նաև ընտրվել և վերապատրաստվել են կարիերայի պատասխանատուներ: Ըստ նրա՝ դուալ համակարագը ներդվել է չորս ուսհաստատությունում՝ Շիրակի, Վայոց ձորի, Տավուշի տարածաշրջանային և Երևանի պետական հումանիտար քոլեջներում: Անդրադառնալով 2017 թվականի ձեռքբերումներին՝ Ա. Աղբալյանը նշել է, որ ձեռնարկատիրական հմտությունների զարգացում ուսումնական մոդուլը ներառվել է 31 ՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչներում, 5 ՄԿՈՒ հաստատություններին տրամադրվել են դրամաշնորհներ՝ հաշմանդամություն ունեցող երիտասարդների համար շարունակական մասնագիտական կրթություն և կայուն զբաղվածություն ապահովելու նպատակով, ինչպես նաև WorldSkills International-ի շրջանակում 4 պետությունների միջև ստորագրվել է WorldSkills Eurasia–ի ստեղծման մասին հռչակագիրը: «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամի աջակցությամբ ՀՀ մարզերի 9 արհեստագործական ուսումնարաններում հիմնվել են «ԱՐՄԱԹ» ինժեներական լաբորատորիաներ, ուսանողների տեղափոխությունն ապահովելու համար Վայոց Ձորի պետական քոլեջին տրամադրվել է միկրոավտոբուս, 9 ուսումնական հաստատություններին՝ նյութատեխնիական բազա, Վայոց Ձորի և Արարատի պետական քոլեջներում հիմնվել է գինեգործության մինի արտադրամասեր: Անդրադառնալով 2018 թվականին նախատեսվելիք

միջոցառումներին՝ Արտակ Աղբալյանը մատնանշել է հետևյալ գործողությունները՝ Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ILO), ՆՄ և ՄՄԿ մասնագիտությունների ցանկի վերանայում, դուալ համակարգի շարունակական ներդրում, Եվրոպական կրթական հիմնադրամի աջակցությամբ աշխատանքի վրա հիմնված ուսուցման մեխանիզմների մշակում (ETF), ձեռնարկատիրական գործընկերության հնարավորությունների ստեղծում, մասնավոր սեկտոր-ՆՄԿՈՒ հաստատություն համագործակցություն՝ նոր ձևաչափով, «Կրթության մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների կատարում: Բանախոսն անդրադարձել է նաև ՄԿՈՒ ոլորտում միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության խնդիրներին:

5) Նիստին մասնակցող խորհրդի անդամների ներկայացրած հանրային առաջարկները, դիտողությունները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները.

Զեկույցին հաջորդել են քննարկման մասնակիցների ելույթները և առաջարկությունները: Մասնավորապես, «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» կազմակերպության ներկայացուցիչ Արևիկ Սարգսյանին հետաքրքրել են ոչ ֆորմալ կրթության կազմակերպման և կարճաժամկետ դասընթացների անցկացման, ինչպես նաև դասախոսների վերապատրաստման մեթոդաբանության հարցերը: «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ կազմակերպության» ներկայացուցիչ Իռեն Սարգսյանը բարձրաձայնել է երիտասարդների զբաղվածության, մասնագիտությունների ցանկի վերանայման և դրանք աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման, ՄԿՈՒ ոլորտի վարկանիշի բարձրացման խնդիրները: «Հույսի կամուրջ» կազմակերպության ներկայացուցիչ Սուսաննա Թադևոսյանն էլ բարձրացրել է ՄԿՈՒ ոլորտում հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելիության և մատչելիության ապահովման և գյուղական համայքների ուսանողների՝ դուալ համակարգում ներգրավման հարցերը:

Ամփոփելով նիստը՝ ԿԳ նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը նշել է, որ նախարարությունը բաց է բոլոր առաջարկների և դիտողությունների համար և կոչ է

արել խորհրդի բոլոր անդամներին՝ ակտիվորեն ներկայացնել առաջարկներ՝ խորհրդի հաջորդ նիստերի օրակարգը ձևավորելու համար:

6) Ընդունված որոշումները՝ ներառյալ տվյալ որոշման վերաբերյալ քվեարկության արդյունքները.

Նիստի ավարտին ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհուրդն ընդունել է որոշում՝

1. Ի գիտություն ընդունել զեկույցը;

2.Հավանության արժանացնել «ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման 2018-2022 թվականների բարեփոխումների ծրագրի» նախագիծը:

Նիստի նախագահող՝ ՀՀ կրթության և գիտության նախարար Լևոն Մկրտչյան

Արձանագրող՝ ԿԳՆ հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության գլխավոր մասնագետ Հեղինե Հովհաննիսյան